Զամախեցւոց երբեմն յառաջադիմութեան և վաճառականութեան համար Անդղիացի ճանապարհորդ ՃէՆքինսըն իւր գրուածոց մէջ յիշել է յամի Տեառն 1559, թէ Զամախեցի Հայ վաճառականք եւս գտնուէին յԱժտէրխան քաղաքում, ինչպէս և Ջուղայեցիք և Ագուլեցիք և ուրիշ տեղացիք։

Զամախու վաճառաշահ լինելոյ համար գրել է յամին 1730 և Աբրահամ Կաթուղիկոսն Կրետացի։

Անդղիացի ճանապարհորդ ՃէՆքինսընի գրուածոց մասին ցանկացողը թող կարդայ Հ. Ղեւոնդ Ալիշանի «Սիսական» գրքի 464 երեսի գրուածը։

Ըստ աւանդութեան Զիրուան քաղաքը գտնւում է նոյն իսկ Աղսու տեղումն գետի աջ ու ձախ եղերքումը՝ Զամախուց հարաւ արեւելեան կողմին լայնատարած դաշտի բերանումն, որոյ օդն ու ջուրն վնասակար ինչպէս վերեւն ասացի։ Աղսուն է 2րդ իշեւանն ճանապարհի (ստանցիա) Զամախուց գնացողի, նոյնպէս 2րդ իջեւանն է Քիւրդամիրիից եկողի։ Աղսուի մօտ գետի վրայ կայ եօթն աչքից քարուկրեայ կամուրջ վաղուցայ շինած պարսիկ արձանագրով, որ չկարողացան թարգմանել ոչ Զամախում և ոչ Բաղուում։ Իսկ Աղսուի վերի կողմին ձորաբերանին կան հին քաղաքի աւերակներ։ Եթէ ասեմ Աղսու բառը Աղուան բառի կրճատումն կամ աղաւաղումն է, զարմանալի չէ, ըստ որում պարսիկները սովոր են ամէն բառ իրենց լեզուին և հնչմանը յարմարացնել. որովհետեւ գետի ջուրը սպիտակ չէ, որ Աղսու անունն ստանար։ Ինչ և իցէ, հին Զիրուան կամ Աղուան քաղաքի տեղը Աղսուն է և նորա ամարանոցը՝ այժմեան Զամախին։ Խաղբաց (Զէբբէկ Խաղախաց) Խաքան թագաւորի որդի Զամախ-Զաթի հրամանաւ Զիրուանի բնակիչները տեղափոխւում են 1567 թուին, լեռնաշղթայի մի փոքրիկ հովտի մէջ և կառուցանում են Զամախի քաղաքը յանուն Զամախ-Զաթի. և այս անունը համառօտելով